ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237) 3 44 41 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2019 թվականի N 367-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ N 44-Ն որոշման 8-րդ կետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2019 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում՝ համաձայն հավելվածի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 16-ին

ք. Մեծամոր

Հավելված

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 16-ի
N 367 -Ա որոշման

Մեծամոր համայնքի 2019 թվականի բյուջեում վերաբաշխում

Համայնքի վարչական բյուջեի «Կրթություն» ծրագրի բաժին 09 խումբ 1 դաս 1 «Թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածից պակասացնել 2540.0 հազ. /երկու միլիոն հինգ հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ, ավելացնել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրի բաժին 01 խումբ 1 դաս 1 4212 հոդվածին՝ 1180.0 հազ. /մեկ միլիոն հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ, բաժին 01 խումբ 6 դաս 1 4241 հոդվածին՝ 100.0 հազ. /հարյուր հազար/ ՀՀ դրամ, 4823 հոդվածին 60.0 հազ. /վաթսուն հազար/ ՀՀ դրամ. «Կրթություն» ծրագրի բաժին 09 խումբ 5 դաս 1 «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածին՝ 1200.0 հազ. /մեկ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Թադևոսյան